

ԼԱՅՔ ՂԵԲՈՆՆԱԼԵՐԵԱՆ

Զօն՝ իր մահուան 60ամեակին

Վենետիկեան վերջալոյսի պահն էր բոսոր:
Անմահական Պարտէզիդ խորն՝
Էի արբշիռ
Քու անցեալիդ փողոցադալա՛յլ մեղեդիով:
Օ՛, Ալիշան,
Մայրամուտի վարդերուն հետ՝
Դուն ի՛մա էիր, յաւերժութեան նըման հրգօր:
Սուրբ Ղազարու մայրիներու ըստուերին տակ՝
Կը հեգէի քու փերթուածիդ խօսքերն ոսկի,
Նըւագարա՛նդ յուզումնածոր...:
Կը հնչէին բառերդ իմ մէջ
Ազօթփի մը, սիրերգի մը պէս լուսաւոր:
Օ՛, Ալիշան,
Կ'եղբայրանար քու երգդ անմահ
Իրիկնային դաշնաքաւալ մըմունջին խորն:
Սուրբ Ղազարու զանգերը զիլ
Կարծես քերթ քերթ, ոլորտին մէջ,
Յիշատակի քու ծաղիկներդ կը քերթէին.
Ու երեկոն կը տարածուէր քու եւ իմ մէջ
Աստուածային, խաղաղաւէտ փողոցութիւնով:
Օ՛, Ալիշան,
Պայմանաւորն անմահութեան,
Դուն ծերունին չէիր երբեք
Գիրքերուդ մեծ բուրգին առջեւ
Լայնատարած սեղանի մը ըստուերին մէջ
Կորափամակ եւ ողբաճայն...
Երիտասարդ ու եռանդուն՝
Մըտածումին, ըզգայնութեան էիր հսկան.
Հայրենասէր, քննարակիր,

Դուն գիտնականն էիր հրգօր՝
Մեր Պատմութեան, Անցեալին դէմ մեծատարած.
Ու քար առ քար,
Եւ հող առ հող,
Ժայռերուն դէմ բեւեռագիր՝
Լոյսի հոսանք ժայթփեցնող մե՛ծ իրատես,
Մականակի՛րդ դուն Մտածման,
Մեծ հընախոյզ եւ գիտնական:
Ինձ քըւեցաւ քէ Վենետիկեան իրիկուան մէջ՝
Եկար ժպտուն ու լուսագգեստ,
Լըփած մարմարը դամբանիդ՝
Խօսիլ ինձ հետ...
Հո՛ն, Պայրընեան հին ձիթենին
Մեզ հովանի կ'ըլլար անդորր...
Վարդենիներ կ'օրօրուէին գլխիդ վերեւ
Լուռ, բուրաւէտ, մեղմ նազանքով...
Քու լոռութիւնդ՝ համանըւագն էր մեծ սիրոյդ...:
Սուրբ Ղազարու զանգերը զի՛լ դողանջեցին...
Ինձ քըւեցաւ քէ խնկարոյր գիշերին մէջ՝
Եկան փառքի պսակըդ կազմել
Քու հին սանե՛րդ քննարակիր,
Պէշիկթաշլեանն ու Վարուժան.
Ու ցիր ու ցա՛ն եւ բիրաւոր
Որդեգիրներդ, հարազատներդ Յաւերժութեան...
Իրիկուան մէջ
Վաթսընամեա՛յ
Յորելեանիդ:

ՄԱՌԻ ԱԹՄԱՃԵԱՆ